նը խրեց քրդի կոկորդը և սպանեց նրան, իսկ ինքը փախավ այնտեղից: Այդ բանը այլ քրդեր տեսնելով՝ գնացին պատմեցին իրենց գլխավորին:

Գլխավորը մարդ ուղարկեց, Շնորհավորին տարավ իր մոտ և ասաց՝ ո՞ւր է քո եղբայրը, որ քրդին սպանեց: Կինն ասաց. «Ոչ թե իմ եղբայրը սպանեց նրան, այլ ես սպանեցի նրան»: Գլխավորը ասաց՝ քանի որ դու սպանեցիր, եկ մահմեդական դարձիր, որ ներենք հանցանքդ: Շնորհավորն ասաց. «Աստված թող չանի, քանզի սպանեցի նրան, եղա մահապարտ, իսկ եթե Քրիստոսին ուրանամ, կլինեմ աստվածուրաց և Աստծուն ատելի»: Քուրդը բարկացավ և ասաց՝ եթե դրան կենդանի թողնենք, մենք կդառնանք ամենքի ծաղրատեղը: Եվ մյուս քրդերին ասաց՝ զարկեք այդ անիծյալին, սպանեք: Հարձակվեցին նրա վրա, ինչպես գազանները գառի վրա՝ փայտով, դաշույնով և նահատակեցին պատվական կին բարի հավատով Շնորհավորին:

Քրիստոնյաները եկան, վերցրին, պատվով թաղեցին նրան ի փառս Քրիստոսի: Հազար հարյուր երեսուներեք (1684) թվին ես գնացի Սկյուտար քաղաք Հայսմավուրքի մեջ գտա այս (պատմությունը) և գրեցի, ինչպես որ էր:

ԳԼՈՒԽ ԿԱ
ՊԱՏՎԱԿԱՆ ԿՆՈՋ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս պատվական կինը Վայոց ձորի Արփա (Արենի) գյուղից էր՝ Խաչիկի դուստրը: Սա նշանվեց Միրիման կոչված ոմն երիտասարդի հետ: Մի օր երիտասարդը նրա հետ ապրեց, որը հղիացավ և ծննդաբերեց որդի: Իսկ Նախիջևանի իշխան Մուրադխան սուլթանը կամեցավ բռնել երիտասարդին: Նա իմացավ, փախավ, գնաց Արարատյան Նորագավիթ գյուղը:

Իշխանը մարդ ուղարկեց իր մոտ տարավ այդ կնոջը՝ Ազիզին, քանզի Ազիզ էր նրա անունը, որ թարգմանվում է Պատվական: Սուլթանը ասաց նրան՝ դու ինչո՞ւ բոզություն արիր և շնությամբ որդի ծննդաբերեցիր: Կինը ասաց՝ ես իմ ամուսնու հետ ապրեցի և նրանից ծննդաբերեցի: Եթե ամուսնությունը մեղք է, չէ՞ որ դուք բոլորդ

ամուսնացած եք: Իշխանն ասաց՝ մենք օրինականորեն ենք ամուսնացած և ոչ այնպես, ինչպես դու բոզությամբ: Կինն ասաց. «Օրինավոր ամուսնությունը մեկն է լինում, իսկ դուք շատ եք առնում, այդ պատճառով ամենքդ բոզ եք»: Իշխանը բարկությամբ ասաց՝ այո՛, բոզ, դու ինձ հետ պատերազմի ես մտել, իմ պետքս չէ, այլ եկ մահմեդական դարձիր, ապա թե ոչ, քեզ դաժանորեն կսպանեմ:

Իսկ կինն ասում է՝ ինձ բավական էր պոռնկությամբ մեղանչելը, իսկ եթե իմ հավատը ուրանամ, կդառնամ ուրացող և բազմաթիվ մեղքերի պարտապան: Իշխանն ասաց՝ այդ ասելով դու ազատվելու հնար չունես, բայց եթե միայն պիտի գաս մեր հավատին: Ազիզն ասաց՝ ուղիղ հավատն ու օրենքը այս է, որ ես ունեմ, այլ հավատ չեմ ճանաչում:

Իշխանը հրաման տվեց դահիճներին և ասաց՝ պարան կապեք դրա մեջքը և տարեք կախեք միևարեից, սպառնացեք՝ եթե չուրանա, պարանը կտրեք և վայր գցեք, որ ընկնելով մեռնի: Նրան առան, տարան բռունցքահարելով ու ծեծելով: Հանեցին միևարեի գլուխը քաղաքից դուրս. կախելով ծեծում էին թրի ծայրով և ասում էին՝ աղոթք (սալավաթ) ասա Մահմադին, ահա մեռնելու ես: Կինն ասաց՝ մի օր մեռնելու եմ, լավ է շուտ մեռնեմ իմ հավատով, քան թե ուրացությամբ օտար հավատով ու չար անունով: Երբ դահիճները իմացան նրա հաստատուն մտադրությունը, պարանը կտրեցին, և գետնին ընկավ այն գովելի կինն ու վախճանվեց:

Նախիջևանի մեծամեծ քրիստոնյաները հավաքվեցին, գնացին սուլթանի մոտ և խնդրեցին, (որ թույլ տա) երանելուն թաղել: Առան, տարան ընդհանուր գերեզմանատուն և մեծ պատվով թաղեցին հազար հարյուր տասնութ (1669) թվին:

ԳԼՈՒԽ ԿԲ
ԿԱՏԱՐՅԱԼ ԿՈՒՅՍԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս կույսը Գողթան գավառի Շաղկերտ* գյուղից էր, նրա անունն էր Թամամ, որ նշանակում է կատարյալ կամ լցյալ: Սա դուստրն էր Մալխաս անունով մի անզգամ մարդու, որ Շաղկերտի

* Գողթան գավառի Շահկերտ գյուղն է: